ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև «Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագրի համար» հայտագրերի փոխանակման ձևով կնքվող դրամաշնորհի Համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ

Երկու երկրների միջև տնտեսական և սոցիալական համագործակցությունը զարգացնելու և խթանելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև նախատեսվում է ստորագրել «Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագրի համար» հայտագրերի փոխանակման ձևով կնքվող դրամաշնորհի Համաձայնագիր:

Սույն Համաձայնագրի շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային փաստաթղթերը թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագրի իրականացմանը նպաստելու նպատակով Ճապոնիայի Կառավարությունը, Ճապոնիայի համապատասխան օրենքներին, կարգավորումներին և բյուջետային հատկացումների կարգին համապատասխան, շնորհելու է մինչև հարյուր երեսունյոթ միլիոն ինը հարյուր հազար ճապոնական իենի չափով դրամաշնորհ (մոտավորապես՝ 1.2 մլն ԱՄՆ դոլար): Վերջինս հնարավորություն կտա նոր սարքավորումներ ձեռք բերել Հայաստանի հանրային հեռուստաընկերության արխիվի թվայնացման համար:

Ճապոնական կողմից ստացված սարքավորումները կազատվեն Հայաստանի Հանրապետությունում մաքսատուրքերից և ներքին այլ հարկերից:

Միևնույն ժամանակ սույն Համաձայնագիրը իրապես կնպաստի Հայաստանի մեդիա ոլորտի զարգացմանը, ինչպես նաև մշակույթային արժեքների պահպանմանը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք նպատակահարմար Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև «Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագրի համար» հայտագրերի փոխանակման ձևով կնքվող դրամաշնորհի Համաձայնագրի ստորագրումը:

ՀՀ տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար՝ **Վահան ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**